



**ՇՊԱԿ-ները
եւ դրանց ընդունելության
գրասենյակները
Հայաստանում**

Կոռուպցիայի գոհ եմ

Ձեզ կօգնի ձեր մարզի Շահերի պաշտպանության եւ աջակցության կենտրոնը

Օգտվեք հարցը կոնֆիդենցիալ պայմաններում արագ ու հեշտ լուծելու գործընթացի հնարավորությունից.

1. Ձանգահարեք Ձեր մարզի թե՛ գծի հեռախոսահամարով (տե՛ս ներքևում) Հանդիպեք Շահերի պաշտպանության եւ աջակցության կենտրոնի իրավական փորձագետի հետ
2. Այցելեք մեզ եւ ստացեք անվճար իրավական խորհրդատվություն

Կարող եք նաեւ Ձեր բողոքը մեզ ուղղել առցանց

www.aac.am
www.shpak.am

ՇՊԱԿ-ների ուղեցույց

Մարզ/քաղաք	Հասցե	Թե՛ժ Գի՛ծ	Գործընկեր
Արագածոտն /Աշտարակ	Աշտարակ, Վ. Պետրոսյան 51/2 *Ապարան՝ Բաղդասյան 13 *Թալին՝ Սպանդարյան 2	0800 01 122 (0249) 2 21 23	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՅԵԻԱ)
Արարատ /Արարատ	Չարենց 2/4	0800 01 117	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՅԵԻԱ)
Արմավիր /Արմավիր	Շահումյան 68ա	0800 01 118	Արմավիրի գաղափարային կենտրոն
Գեղարքունիք /Գավառ	Սայադյան 2/1	0800 01 116	Գեղարքունիքի առևտրաարդյունաբերության պալատ
Կոտայք /Յրազդան	Կենտրոն Ա-2 քաղամաս	0800 01 119	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՅԵԻԱ)
Լոռի /Վանաձոր	Տիգրան Մեծ 59	0800 01 112	ԹԻ-Յեկինյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Շիրակ /Գյումրի	Պուշկին 96	0800 01 121	ԹԻ-«Ասպարեզ» ժուռնալիստների ակումբ
Սյունիք /Կապան	Կապան, Շահումյան 4 *Սիսիան՝ Չարենց 5 *Գորիս՝ Խորենացի 41 *Մեղրի՝ Զորավար Անդրանիկ 36/1	0800 01 114 (02830) 32 12 (0284) 2 23 17 (0286) 4 23 13	Սյունիքի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն
Տավուշ /Իջևան	Անկախության 4/14	0800 01 113	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՅԵԻԱ)
Վայոց Ձոր /Եղեգնաձոր	Նարեկացի 18ա	0800 01 120	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՅԵԻԱ)
Երևան	Այգեստան 9, տուն 6	0800 01 110	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ԳԿ (ԹԻ)

*ընդունելության կենտրոններ, որտեղից քաղաքացիների դիմումները հղվում են տվյալ մարզի ՇՊԱԿ



ՀԳՄԾ
Հակակոռուպցիոն գործողության
մոբիլիզացման ծրագիր

Սույն լրատվաթերթիկի բովանդակությունը կարող է չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:

ՇՊԱԿ

**Շահերի Պաշտպանության և
աջակցության կենտրոն**

ՇՊԱԿ տեղեկատու - Թողարկում 2 - 2009 սեպտեմբեր

**ՇՊԱԿ-ները շարունակում են ընդլայնել անվճար իրավաբանական
ծառայությունները Հայաստանում**

ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- ՇՊԱԿ-ը շարունակում է ընդլայնել անվճար ծառայությունների հորիզոնը Հայաստանում
- Երեխայի հետ մնալու ծնողների իրավունքները վերականգնվեցին Երևանի հիվանդանոցներից մեկում
- Հարցազրույց Շիրակի ՇՊԱԿ-ի համակարգող Լևոն Բարսեղյանի հետ
- Տարեք քաղաքացու անարդարացի վտարումը տնից կանխվեց Լոռու մարզում
- Մեկ զանգ անվճար հեռախոսահամարով բեկանում է կոռուպցիան Սյունիքում
- ՇՊԱԿ-ների ուղեցույց և քարտեզ

Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններից (ՇՊԱԿ) առաջինի բացման օրվանից՝ 2008 թվականի հոկտեմբերին, Հայաստանի ՇՊԱԿ-ները ստացել են մոտ 1,500 անվճար իրավաբանական օժանդակության դիմումներ: ՇՊԱԿ-ներն իրենցից ներկայացնում են կենտրոններ, որտեղ այցելում կամ զանգահարում են կոռուպցիայի գոհ դարձած քաղաքացիները՝ ստանալու անվճար և կոնֆիդենցիալ իրավաբանական աջակցություն: 11 կենտրոնները տեղակայված են բոլոր տասը մարզերի խոշորագույն քաղաքներում, ինչպես նաև Հայաստանի մայրաքաղաք Երևանում: Քաղաքացիները կարող են աջակցություն ստանալ՝ այցելելով վերջերս բացված էլեկտրոնային կայքը՝ www.shpak.am. Կայքն առաջարկում է նորություններ՝ կենտրոնների կողմից վերջերս իրականացված գործունեության մասին, ազգային և տեղական մարմինների ուղեցույց, կոռուպցիային վերաբերող

օրենսդրական ակտեր ու հրապարակումներ և յուրաքանչյուր ՇՊԱԿ-ի կոնտակտային տվյալները: Սեփականություն գրանցելիս, ոստիկանության կողմից լիզարությունների շահագործման դեմ պայքարելիս և պաշտոնական փաստաթղթերի հետ գործ ունենալիս՝ դուք կարող եք վստահ հենվել ՇՊԱԿ-ի վրա՝ ցանկացած տեղ և ցանկացած ժամանակ կոռուպցիայի հետ առնչվելով: ՇՊԱԿ-ներն օգնում են նաև այն քաղաքացիներին, ովքեր բախվում են կոռուպցիայի հետ իրենց իրավական աշխատանքային և քաղաքացիական ապահովության շահերը փնտրելիս ու առողջապահական ծառայությունների մատուցման ոլորտում: Կոռուպցիայի հետ կապված իրավաբանական օժոնդակություն ստալու նպատակով կենտրոնի հետ կապվելու համար սույն հրապարակման վերջին էջի ցուցակում տեղադրված են կոնտակտային հեռախոսահամարներ և հասցեներ:

Երեխայի հետ մնալու ծնողների իրավունքները վերականգնվեցին

Երբ ծնողները Երևան բերեցին իրենց նորածին երեխային բուժելու, նրանց պատկերացումն անապահով էր: Երբ ծնողները հիվանդանոցի համապատասխան մասնաշենքում իրենց հիվանդ երեխայի հետ: Ընտանիքը Գեղարքունիքի մարզից Երևան էր եկել, որպեսզի իր մեկ ամսեկան աղջիկը կարողանա ստանալ անհրաժեշտ բժշկական օգնությունը: Ի զարմանս իրենց՝ հիվանդանոցի աշխատակիցները կաշառք պահանջեցին՝ թույլատրելու մորը մնալ երեխայի հետ հիվանդանոցում և սպառնացին հիվանդանոցի տարածքից նրան դուրս հանել, եթե չտան կաշառքը: Տարակուսանքով լի երեխայի հայրը դիմեց Երևանի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՇՊԱԿ) օգնություն ստանալու համար: Երևանի ՇՊԱԿ-ը երկրորդ մեկ տեղակայված, հասարակական կազմակերպությունների կողմից գործարկվող կենտրոններից մեկն է, որտեղ կոռուպցիայի գոհերը անվճար իրավաբանական խորհրդատվություն են ստանում՝ զանգահարելով կամ անձամբ

այցելելով: Տեղեկանալով իրավիճակի հրատապության մասին՝ ՇՊԱԿ-ն իսկույն կապվեց Առողջապահության նախարարության հետ, ինչպես նաև հիվանդանոցի գլխավոր բժշկի հետ, ինչից հետո բժիշկն աշխատակազմին կարգադրեց, ըստ օրենքի, երեխայի ծնողներին անհապաղ կերպով ապահովել սենյակով հիվանդանոցում: ՇՊԱԿ-ը պահպանեց կապը երեխայի ծնողների հետ՝ հավաստիանալու համար, որ բժշկի կարգադրությունը կատարվում է: «Ես չեմ կարող ամբողջ երախտապար-տությունս արտահայտել ՇՊԱԿ-ին՝ ընտանիքիս արագ աջակցություն ցուցաբերելու համար», ասում էր հանգստացած մայրը, «իրականում, կարծում եմ, որ դուք փրկել եք աղջկաս կյանքը, քանի որ նա, մեկ ամսեկան լինելով, զգում է իր ծնողների մշտական ներկայության կարիքը»: Նշելով, թե ինչքան ազգեցիկ էր ՇՊԱԿ-ի օգնությունը՝ մայրն եզրակացրեց «Ես կոչ եմ անում ուրիշներին էլ

դիմել ՇՊԱԿ մմանատիպ խնդիրների դեպքում»: Նմանատիպ դեպքերը, երբ ոչ պաշտոնական վճարումներ են պահանջում քաղաքացիներից, կրկնվող բնույթ են կրում Հայաստանի առողջապահական համակարգում: ՇՊԱԿ-ները պատրաստ են օգնել առողջապահության ոլորտի կոռուպցիայի գոհերին և արդեն ունեն համակարգային փոփոխությունների և այլ նախաձեռնությունների նախագիծ՝ վերջինս կանխելու համար:



Հարցազրույց



Լևոն Բարսեղյան

Լևոն Բարսեղյանը նախկին լրագրող է, համայնքային ակտիվիստ, և Շիրակի ՀԿ խորհրդի նախագահ: Այժմ նա համակարգում է Շիրակի ՇՊԱԿ-ը և այս հարցազրույցում կիսվում հակակոռուպցիոն աշխատանքի վերաբերյալ մտքերով:

Ե՞րբ է բացվել Ձեր ՇՊԱԿ-ը: Ձեր ՇՊԱԿ-ն ունի՞ հակակոռուպցիոն ընդունարան/տեղեկատվական կենտրոն:

Շիրակի մարզի ՇՊԱԿ-ը սկսել է գործել 2008 թվականի հոկտեմբերի 9-ից: ՇՊԱԿ-ի տեղեկատվական կարիքները հոգում է ժուռնալիստերի «Ասպարեզ» ակումբը, որտեղ գործում է մամուլի ասոցիացիայի սրահ, կան աշխատանքային ակտիվ հարաբերություններ ՁԼԱ-ների և լրագրողների հետ:

Ինչպե՞ս եք անձամբ Դուք ներգրավվել Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն պայքարին:

Նկատել եմ, որ կոռուպցիայի մակարդակը Հայաստանում հասել է պետության կործանման իրական սպառնալիքի մակարդակի: Իմ լրագրողական և հասարակական գործունեության ընթացքում ծանոթացել եմ կոռուպցիայի հատկանիշներ կրող հարյուրավոր դեպքերի և օրինակների, լուսաբանել եմ դրանք, արդարություն եմ որոնել: Որպես ՀԿ խորհրդի նախագահ 10 անգամ դիմել եմ դատարան՝ իրենց

պաշտոնական դիրքը չարաշահող պաշտոնյաների դեմ:

Ինչպե՞ս են տեղի բնակիչներն արձագանքել իրենց բակում մեծ կենտրոնի բացմանը:

Դիմել են կենտրոն իրենց խնդիրներով, փորձել են տարիներով լուծումներ չունեցող իրենց խնդիրներին լուծում գտնել մեր օգնությամբ:

Ձեր կարծիքով, ո՞ր մասով է ՇՊԱԿ-ն առավելապես ծանրաբեռնված աշխատում՝ իրավաբանական խորհրդատվության տրամադրում, դատարաններում կոռուպցիոն գործերի փաստացի ներկայացում, միջնորդություն պետական մարմինների հետ, թղթաբանության հետ կապված աջակցություն:

Ավելի ծանրաբեռնված ենք թղթաբանության հետ կապված աջակցության և իրավաբանական խորհրդատվության խնդիրներով: Առաջիկայում ենթադրում ենք դատական գործերով ծանրաբեռնվածության ամ:

Ինչպե՞ս է գործում անվճար թեժ գծի ծառայությունը: Դուք շա՞տ հեռախոսազանգեր եք ստանում: Ինչպիսի՞ խնդիրների առնչությամբ են քաղաքացիները հիմնականում զանգահարում:

Թեժ հեռախոսագծով քաղաքացիները դիմում են ավելի սակավ, քան ուղղակի այցելությամբ: Թեժ հեռախոսագծով ավելի շատ անստորագիր տեղեկություններ են հաղորդում այս կամ այն հիմնարկում տիրող կոռուպցիոն իրավիճակի մասին:

Ձեր փորձից ելնելով՝ ո՞ր բողոքները կամ հարցերն են առավել հատուկ բնույթ կրում կամ կրկնվում:

Ավելի հաճախական են պաշտոնական դիրքի զանազան չարաշահումների մասին բողոքները:

Արդյոք Ձեր մարզում կա՞ կոնկրետ պետական կամ գործարար մարմին, որի դեմ ուղղված են ստացված բողոքների/հարցերի զգալի մասը:

Բողոքների ընդգծված գերակայություն այս կամ այն պետական կամ տեղական հիմնարկի նկատմամբ չենք նկատել: Բողոքներ ունենք ե՛Ց ՀՀ Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներից մեկի դեմ, ե՛Ց սոցիալական ապահովության ծառայության դեմ, ե՛Ց քաղաքապետարանի դեմ, ե՛Ց դատարանների դեմ, ե՛Ց մարզպետարանի դեմ և այլն:

Կոնկրետ Ձեր մարզում ո՞ր սեռի ներկայացուցիչներն են առավել մեծ ակտիվություն ցուցաբերել կենտրոններին դիմելու հարցում: Ո՞ր տարիքային խմբին են դիմողները պատկանում:

Բողոքներով մեզ դիմում են առավելաբար միջին տարիքի կանայք, ապա՝ տարեցները, և հազվադեպ՝ երիտասարդները:

Ներկայում քանի՞ գործ ունեք դատարաններում կամ քանի՞ գործ է գտնվում պաշտոնական իրավական կամ բողոքարկման գործընթացում:

Այս պահին ունենք տասներեք գործ, որոնք հղվել են երևանի դատարան: Առաջին գործը վերաբերում է 1988-ի երկրաշարժի տուժածների համար շենքեր կառուցող բանվորներին, որոնց գործատուն չի վճարել խոստացված գումարը՝ տալով 50,000 կամ 60,000, պայմանավորված 160,000-ի փոխարեն: Ապագայում այդ գործերը միավորվել են մեկ գործի:

Մենք ունենք մեկ մի քանի մերժված հայց, որոնք պատրաստվում ենք ներկայացնել եվրոդատարան: Ունեցել ենք երկու դատական հայց ընդդեմ մարզպետի՝ իրավունքի վերականգնման համար: Մեկը կարծվել է հայցվորի մահվան պատճառով, մյուս գործով հայցը մերժվել է, և Վճռաբեկ բողոք է հղվել ՀՀ Վճռաբեկ դատարան: Սպասում ենք միստի մասին ծանուցագրի:

Կարծում եք, կենտրոնի գոյությունն օգնու՞մ է մարդկանց հասկանալ, որ իրենք ունեն բողոքելու իրավունք և որ չպետք է շարունակեն մնալ կոռուպցիայի զոհի կարգավիճակում:

Կարծում ենք, որ, իսկապես, կենտրոնի գոյությունն ու գործունեությունը մարդկանց օգնում է ավելի վճռական դառնալ և խուսափել զոհի կարգավիճակից:

Տարեց տիկնոջ անարդարացի վտարման կանխում

Օլյա Կազական՝ Վանաձորի տարեց քաղաքացին, վերջերս իմացավ, որ նա և իր ընտանիքը պետք է վտարվեն իրենց տնից: Տունը վաճառվել է բաց աճուրդում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ օգտագործելով ըստ տիկնոջ, կեղծ փաստաթղթեր: Առանց նախնական գրության, ակնկալելով արագ վտարում՝ Օլյան ուղղվեց դատարան, որտեղ նրան ասացին, թե նրա հայրը անհիմն է: Մնալով առանց օգնության՝ Օլյան այցելեց տեղական Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՇՊԱԿ):

Օլյան հայտնեց, որ պարտապանն հետապնդում էր իր հարևաններից մեկին՝ բավականին մեծ պարտքի համար: Ըստ նրա՝ պարտապանն համատեղ էր աշխատում տեղական հողի կադաստրի հետ, որպեսզի ձեռք բերի անշարժ գույքի կեղծ վկայականը, որը հաստատում էր, որ անշարժ գույքն իրականում պատկանում էր իր հարևանին: Այս վկայականն էլ հիմք էր հանդիսանում աճուրդում, որի ընթացքում ծախվեց Օլյայի գույքը: Գործն ավելի բարդացնելու համար պետական ատյանի աշխատակիցները, որոնք պատասխանատու էին հասարակական աճուրդի անցկացման համար, ենթադրաբար կեղծել էին ստորագրությունը՝ պարտապանին դարձնելով աճուրդի հարթող:

ՇՊԱԿ-ի աշխատակազմը սկսեց գործել երկու ճակատներում: Ի սկզբանե նրանք հայց ուղարկեցին Քաղաքացիական դատարան և հաղթեցին՝ ետ հղելով գործը դեպի Ընդհանուր իրավասության դատարան և դադարեցնելով Օլյայի և իր ընտանիքի անհապաղ վտարումը: Երկրորդ ճակատում նրանք երկու քրեական գործ էին բացել դատախազությունում. առաջինը ընդդեմ տեղական հողի գրանցման գրասենյակի՝ պետական փաստաթղթեր հավանական կեղծիքի համար, և երկրորդը՝ ընդդեմ բաց աճուրդի գրասենյակի ստորագրությունների կեղծման համար: Երկու գործերն էլ դեռ ընթացքում են:

Օլյան շնորհակալություն հայտնեց ՇՊԱԿ-ի աշխատակազմին, հաստատելով, որ առանց նրա օգնության «նրա ընտանիքը կարող էր փողոց չարված լինել՝ առանց ապրելու տեղ ունենալու»: Օլյայի հաջողությունը ցույց է տալիս, թե ինչպես են ՇՊԱԿ-ները հնարավորություն տալիս քաղաքացիներին ամբողջ Հայաստանում դիմարել կոռուպցիային այնպիսի ոլորտներում, ինչպիսին է սեփականության գրանցումը:



Անվճար հեռախոսահամարով մեկ զանգը կանխում է կոռուպցիան

Տեղական մարմնից գրանցման վկայականն ստանալը պետք է որ պարզ գործընթաց լինի, բայց ճիշտ հակառակն էր Կարենի համար՝ Կապանի մերձակա գյուղի բնակիչ: Վկայականները պետք է տրվեն անվճար և առանց որևէ պայմանների: Սակայն, երբ Կարենը դիմեց այս փաստաթուղթը ստանալու, տեղական մարմինն ներկայացրեց նրան մի շարք հավելյալ դիմումներ իրենց ծառայությունների դիմաց: Այս երևույթը Կարենին այն միտքին բերեց, որ նրանք կաշառք էին սպասում: Երբ Կարենին ի վերջո մերժեցին իր վկայականը տրամադրել, Կարենը զանգեց անվճար թեժ հեռախոսահամարով՝ Կապանի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՇՊԱԿ): Հեռախոսով Կարենը պատմեց ՇՊԱԿ-ի աշխատակազմին, որ պետական մարմինը նոր պահանջներ են հորինում իր գրանցման վկայականը



ՇՊԱԿ-ները իրավագործում են քաղաքացիներին պայքարելու կոռուպցիայի դեմ

տրամադրելու համար: ՇՊԱԿ-ի աշխատակազմը միանգամից կապվեց տեղական պետական ատյանի հետ: ՇՊԱԿ-ի աշխատակազմը հիշեցրեց պաշտոնյաներին, որ հայկական օրենքն նախատեսում է գրանցման վկայականի անվճար և անպայման տրամադրում: Այս մեկ հեռախոսազանգն էր, որ օգնեց Կարենին ստանալ իր գրանցման վկայականը առանց հապաղման: «ՇՊԱԿ-ը շատ լավ գործեց»,

ասում է Կարենը, « Այն ինձ զերծ պահեց քաջքուկից առաջացող խնդիրներից, որոնց, համոզված եմ, ուրիշներն էլ են հանդիպում»: Քաղաքացիներին օգնելը կոռուպցիան հաղթահարելու գործում հանդիսանում է ՇՊԱԿ-ների և անվճար թեժ հեռախոսագծերի հիմնական նպատակը: Կարենի հաջողությունը ցույց է տալիս, թե ՇՊԱԿ-ները ինչպես են Հայաստանով մեկ քաղաքացիներին հնարավորություն տալիս պայքարել կոռուպցիայի դեմ:

*Հոդվածում ներկայացված քաղաքացու անունը փոփոխված է գաղտնիության նկատառումով: